1. ՀԱԱՀ ռեկտորատի 2025-2026 ուստարվա աշխատանքային պլանի քննարկում և հաստատում։
    - միաձայն հաստատել 2025-2026 ուստարվա աշխատանքային պլանը։

2. 2024-2025 ուստարվա ակադեմիական պարտքերի հանձնման գործընթացը համալսարանի ուսումնական ստորաբաժանումներում։
    - 2.1 զեկույցներն ընդունել ի գիտություն,
    - 2.2 ակադեմիական պարտքերի մարման գործընթացը ավարտել նախատեսված ժամանակացույցի համաձայն։

3. Ուսման վարձավճարների փոխհատուցման, շրջափոխման (ռոտացիայի) արդյունքների քննարկում և հաստատում։
    - միաձայն հաստատել 2024-2025 ուստարվա շրջափոխման ներկայացված արդյունքները։
4. Պրակտիկաների կազմակերպման արդյունավետությունը և խնդիրները։ Աշխատանքային կիսամյակի նախապատրաստական և ընթացիկ աշխատանքներ։
    - տվյալներն ընդունել ի գիտություն և հաստատել աշխատանքային կիսամյակի արդյունավետության վերաբերյալ առաջարկները։

Ընթացիկ հարցեր

5. 1. Ա. Ե. Քոչինյանի անվան գյուղատնտեսական քոլեջի տնօրեն Վ. Վարդանյանի կողմից ներկայացված առաջարկները.
    - 1.1 միաձայն հաստատել քոլեջում կուրսղեկների առկա հաստիքները
    - 1.2 21 կողմ և 1 դեմ ձայների հարաբերակցությամբ հաստատել ուսումնական հաստատության ներքին կարգապահական կանոնները խախտած 18 ուսանողներին նկատողություն հայտարարելու առաջարկը, միևնույն ժամանակ վերանայել կանոնակարգը, սահմանել հստակ պահանջներ՝ այդ մասին իրազեկելով բոլոր ուսանողներին։
    - 1.3 միաձայն հաստատել հետևյալ առաջարկները՝
    - քոլեջում մի կիսամյակում 100-150 ժամ անհարգելի բացակայությունների համար նկատողություն ստացած ուսանողին, հաջորդ կիսամյակում

100 ժամից ավելի անհարգելի բացակայությունների դեպքում, հայտարարել խիստ նկատողություն, իսկ երրորդ 100 ժամից ավելի անհարգելի բացակայությունների դեպքում հեռացնել քոլեջից:

- ➢ 150-200 ժամ անհարգելի բացակայությունների համար խիստ նկատողություն տրված ուսանողին, հաջորդ կիսամյակներում 150 ժամից ավելի անհարգելի բացակայելու դեպքում, հեռացնել քոլեջից:
- 1.4 Ա.Քոչինյանի անվան գյուղատնտեսական քոլեջում հաստիքներ ավելացնելու առաջարկով դիմել ՀԱԱՀ հոգաբարձուների խորհրդին, իսկ աշխատասենյակների տրամադրումը հանձնարարել համապատասխան կառույցներին:

2. **Ռեկտոր Հ.Զաքոյանի հաղորդումը ս/թ նոյեմբերին ՀԱԱՀ հիմնադրման 95-ամյակի միջոցառումներ կազմակերպելու համար առաջարկներ ընդունելու մասին:**
   - աջակցել համալսարանի հոբելյանական միջոցառումների պատշաճ իրականացմանը:

ՌԵԿՏՈՐԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Հ.Ս. ԶԱՔՈՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Է. Ժ. ՄԽԵՅԱՆ